Այդ պակասը լրացնելու ջանքին կը լծուի Աւետիս իրրեւ հմուտ արհեստագէտ եւ քաղ գինուորամը չորս բաժանումներով՝ նշանակուած մասնաւոր վարիչ մարմինի մը հսկողութեան տակ: Այդ փոքր գործարանը օրհնութիւն մը եղաւ եւ բախտ վճռեց կռիւին: Հոն նորօգուեցան գէնքեր, լեցուեցան փամփուշտներ, շինուեցան պարկուներ (ազէ), որ հնարուեցաւ Գէորգ Պէրէ-ճիբեան անուն երիտասարդի մը կողմէ, որուն օրական սպառումը կ'ըլլար մօտաւորապէս 2000: Շինուեցան հրէջի գործիքներ եւ մէկ արձիճներ եւ գնդակներ, պատրաստուեցաւ վառօղ (\*), գինարանի շէնքէն գուրս, քարայրներու մէջ:

«Իսկ ամենակարեւորը՝ կ'որոշուի կազմակերպիլ գինարան մը, գինական կարիքներու նորոգութեանց համար: Այս գինարանը մեծ դեր կատարած է: Գործին ոգին էր հնարամիտ ու գեներալ Ե. Կասկեղի Աւետիս Գալմբերտեան: Այս մարտին մէջ Աւետիսին դերը այնքան ցցուն է, որ կարելի է ըսել, թէ առանց անոր հազիւ թէ կարելի ըլլար կռիւներուն մէջ ձեռք ձգել այն յաջողութիւնները, որոնցմով պատկուեցաւ Այնթապի գոյամարտը»: («Այնթապի գոյամարտը», էջ 72):

Պատրաստեց ՎԱՀԷ Ն. ԿԻՒԼԵՍԵՐԱՆ (Շար. 2)

(\*) Հայկական դիրքերու որմածակներուն բացուածքի այս ձեւը բուրքեր եւս ընդօրինակեցին գինաղաղի շրջանէն ետք: (\*\*\*) Վառօղի արտադրութիւնը օրական 4 քիլոյնի կը հասնէր, որ կը պատրաստուէր պատերէն հաւաքուող բորակով եւ ծծումբով: Այս կենսական գործի վարպետ էր Բեռնարդի տէր Յակոբ քեյլ. Կարպետեան, որ առաջնակարգ վառօղ պատրաստելու մասնագետ մըն էր: Այս անվախ հայ քահանայ էր, որ Ամբրիկեան հիւանդանոցէն կրակելով, Մարտինի բլրակին կողմէ հիւանդանոցը պատահաւոր չեքէն իր առաջին գնդակով իսկ նախաձեռնութեամբ լռեցուց գայն:

«ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԷՃԻ ԱԾԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑԱՆՔԻՆ



Լիրանանի Մանուկներու Ազգային Մարմինը այս տարի եւս կազմակերպեց մանուկներու երաժշտական մրցանք մը՝ համագործակցութեամբ Լիրանանի Պետական Բարձրագոյն Երաժշտանոցին:

Մրցանքին կրնային մասնակցիլ տարբեր գործիքներ նուազող աշակերտներ, որոնց տարիքը 12 տարեկանը չ'անցնիր: Երրորդ տարին ըլլալով՝ Համազգայինի «Բ. Կանաչեան» երաժշտական քոլէճէն մասնակցեցան տարիքային պայմանը լրացնող վեց աշակերտներ, որոնք բոլորն ալ պետական երաժշտանոցի տնօրէն Ուալիտ Ղըմիշի նախագահած դատական կազմին յատուկ ուղղութեան արժանանալով՝ ստացան հետեւեալ մրցանակները:

- Կարո Մուղալեան՝ ջութակ (ուսուցիչ՝ Գարիկ Գասպարեան), ոսկի մետալ:
- Հերա Աճեմեան՝ դաշնակ (ուսուցչուհի՝ Կարինէ Ծահինեան), ոսկի մետալ:
- Շանթ Նոյնուսեան՝ դաշնակ (ուսուցիչ՝ Մայք Աճեմեան), ոսկի մետալ:
- Մարիա Յովսէփեան՝ դաշնակ (ուսուցչուհի՝ Յամիկ Գասպարեան), ոսկի մետալ:
- Լորի Ծառուկեան՝ դաշնակ (ուսուցչուհի՝ Նարա Մարկոսեան), ոսկի մետալ:
- Քրիսթին Սթամպուլեան՝ դաշնակ (ուսուցչուհի՝ Նարա Մարկոսեան), արծաթ մետալ:
- Կազմակերպիչ յանձնախումբին որոշումով եւ ընտրութեամբ, նախորդ տարիներու նման, մեր մրցանակակիրներէն երեքը առիթը ունեցան նուագելու Հինգ-չարթի, 17 Ապրիլ 2003ին, Լիրանանի Առաջին տիկին Աննոյէ Էմիլ Լահուտի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ նախագահական պալատին մէջ կազմակերպուած պաշտօնական ունկնդրութեան, որուն ընթացքին յատուկ արարողութեամբ տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն:
- Այս մրցանքը յաւելեալ ապացոյց մըն է «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլէճի մասնակցութեան լուրջ եւ բծախնդիր աշխատանքին:

www.hamazkayin.com

AFHIL RENT AND SALE AT HOME Wheelchair Walker Electric Bed Manual Bed Water Mattress Cans Sticks Serum Tripod Walking Frame HOME MEDICAL EQUIPMENT SERVICES ՅՈՒՑԱՄԱՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆԹՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԵՐԼ, ԱՅԵՏԻ ՇԵՔ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (01) 242556/7 NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

PHOTO NERSES (Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ) ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25 ԱՍԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 36 photo ֆիլմի նկարահանումը միայն 8,000 Լ. ո. (Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍՏԵ ՆԱԵՒ Լուսանկարի ցոյց ֆիլմ մը + ալպոմ մը + նկարի INDEX մը Կը նկարենք փոքրերու լուսանկարներ յատուկ յարգարանքով PHOTO NERSES: Պուրճ Ըսմուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթր ԱՐԻՆ»ի դիմաց: Ըն. 01 - 261858 եւ 01 - 255992

Շար. ը՝ էջ 10 «ԳՐՈՇԱԿ»



# «ԵՐԿՐՈՐԴ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆ»

Լուրեր ցնցելի է։ Թերեւս շոյուած զգալու խաբկանքը ակնթարթի մը համար կրնայ մոլորեցնել զայն յոողը, սակայն ոտնձգ-գութեան մը առկայութիւնը կը գերակշռէ եւ կը մղէ բնագործին ինքնապաշտպանութեան։ Լուրը հետեւեալն է։ 1988-1999 մորմոն եկեղեցիին կողմէ «փոխ մկրտուած» են անուանի հայ դէմքեր, ինչպէս՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մեսրոպ Մաշտոց, Ներսէս Շնորհալի, Վարդան Մամիկոնեան, Սայաթ Նովա, Խրիմեան Հայրիկ, Կոմիտաս Վարդապետ, Ուիլիւմ Մարոյեան եւ Արա Արաքս, ինչպէս նաեւ՝ Հայկական Յեղափոխութեան զոհեր, որպէսզի անոնք յետ մահու միանան Վերջին Օրերու Սրբոց Յիսուս Քրիստոսի եկեղեցիին եւ մորմոն դառնան։

Վարի սինակներով թարգմանուած յօդուածը, որ հրատարակուած է հայկական լուրերու «Կոտուակ» համացանցի կայքին կողմէ, այս մասին մանրամասնօրէն տեղեկացնելով նաեւ կը ընէ, թէ «փոխ մկրտուած» անուանի հայերուն ծագումնաբանական տուեալները, որոնք կը գտնուին մորմոններու կողմէ պատրաստուած տեղեկութիւններու շտեմարանի մը մէջ, սխալ են եւ խեղաթիւրուած։

Անհետեւ թիւրքիստիկ փոխգրատիւնը հայտնաբերուած յօդուածը, որ հրատարակուած է հայկական լուրերու «Կոտուակ» համացանցի կայքին կողմէ, այս մասին մանրամասնօրէն տեղեկացնելով նաեւ կը ընէ, թէ «փոխ մկրտուած» անուանի հայերուն ծագումնաբանական տուեալները, որոնք կը գտնուին մորմոններու կողմէ պատրաստուած տեղեկութիւններու շտեմարանի մը մէջ, սխալ են եւ խեղաթիւրուած։

Անհետեւ թիւրքիստիկ փոխգրատիւնը հայտնաբերուած յօդուածը, որ հրատարակուած է հայկական լուրերու «Կոտուակ» համացանցի կայքին կողմէ, այս մասին մանրամասնօրէն տեղեկացնելով նաեւ կը ընէ, թէ «փոխ մկրտուած» անուանի հայերուն ծագումնաբանական տուեալները, որոնք կը գտնուին մորմոններու կողմէ պատրաստուած տեղեկութիւններու շտեմարանի մը մէջ, սխալ են եւ խեղաթիւրուած։

Այսպիսով վերջերուն Ամենայն Հայոց կաթողիկոսութեան կողմէ հայտնութեան անունով հրատարակուած մամուլի հաղորդագրութիւն մը ուժգին կերպով կը դատապարտէր փոխ մկրտութիւնը «իրբեւ փրկութեան եւ Աստուծոյ շնորհներուն արժանանալու միջոց» եւ կողմ ունենար այս դադարեցնելու «այս վնասակար եւ անարգական վերաբերմունքը»։ Հաղորդագրութեան մէջ

յտակօրէն կը շեշտուէր այն ճշմարտութիւնը, թէ հայութիւնը չորրորդ դարուն քրիստոնէացած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ կաթողիկոսին միջոցով, 20 դար շարունակ պահպանելով թաղէսու եւ Բարթողիմէոս առաքելներուն կողմէ հիմնուած Հայ Առաքելական եկեղեցիին ուղղափառ հաւատքը։

«Մորմոն աղանդին կողմէ անուանի հայերու «մկրտութեան» տեղեկութիւնները ծիծաղելի են եւ իրապէս գայթակղեցուցիչ,- կ'ըսէ հաղորդագրութեանը հեղինակը՝ Անտոն Դաւիթեան։ Մորմոններու շտեմարանի յոռուի «մկրտելու» ուղի է Հայ քրիստոնեայ, որ մեռած է։ Ասիկա անարգական արարք մըն է աշխարհի տարածքին սփռուած Հայ ժողովուրդին համար, որ տեւաբար նահատակուած է քրիստոնէութեան պաշտպանելով։ Խնդրոյ առարկայ մեռած անձը սուրբ թէ մեղաւոր ըլլայ, ոչ ոք իրաւունք ունի զայն մկրտելու։ Մեռելները կը պատկանին միայն Աստուծոյ իշխանութեան։ Այսպէս կը հաւատան բոլոր քրիստոնէական աւանդական եկեղեցիները»։

Շատերու համար զարմանալի կրնայ թուիլ այն իրողութիւնը, թէ մորմոն եկեղեցիին կը ծառայեն մեծ թիւով կիներ եւ տղամարդիկ, որոնց պարականուածութիւն է մայքրոֆիլմի վերածել ուղղափառ, կաթողիկէ եւ բողոքական եկեղեցիներու գերեզմանատան արձանագրութիւնները, ինչպէս նաեւ՝ ծննդեան եւ մահուան վաւերաթուղթերը, այլ խօսքով՝ նախորդ սերունդներու վերաբերող որեւէ արձանագրութիւն։ Մորմոնները կը յուսան ժամանակի ընթացքին տարբեր ժողովուրդներու բոլոր մեռելները յետ մահու մկրտել մորմոն եկեղեցիին մէջ։

Մագնետիկ փոխգրատիւնը կողմ կ'առնէ մահուան նախաւրջը «փրկուելու» մտահոգութեանը։ Չափահաս տարիքի մկրտութիւն կը կատարուի մեռեալի մը հաշուով, որ այս աշխարհէն հեռացած է «առանց ճշմարտութեան գիտութիւնը ապրած ըլլալու»։ Աւելի քան 50 տաճարներու մէջ որեւէ օր հազարավոր հաւատացեալ մորմոններ կը մկրտուին մեռելներու հաշուով, զանոնք յետ մահու մորմոն դարձնելու նպատակով։

Աւանդական եկեղեցիները կը հաւատան միայն մէկ մկրտութեան՝ ոգեղէն փրկութեան

հասնելու եւ մեղքերը քաւելու համար։ Անոնք բոլորովին անվաւեր կը նկատեն մորմոններուն «փոխ մկրտութիւնները»։

Մորմոններուն «փոխ մկրտութեան» գաղափարը հետեւեալն է. Աստուած կ'ուզէ, որ մեզմէ իւրաքանչիւրը միանայ իր փառքին։ Այս մէկը իրագործելու համար ան առիթ կու տայ, որ երկրի վրայ ընդունինք մորմոններու հաւատամքը, այսպէս մեզ կ'ուղարկէ «ոգեղէն բանտ» մը, մինչեւ որ մորմոններու հաւատամքը ներկայացուի մեզի եւ մենք հաւատափոխ դառնանք։ Մորմոնները կ'ըսեն, թէ այդ «ոգեղէն բանտ»ին մէջ իրենց քարոզիչները կ'աշխատին մորմոններու հաւատամքը ծանօթացնել մեռելներուն եւ անոնց, որոնք ցարդ չեն ստացած զայն։ Եթէ մեռելներէն ոմանք փախաբիւ մորմոն դառնալ, ապա պարտաւոր են կիրարկել աղանդին օրէնքները, որոնց շարքին՝ փոխ մկրտութիւնը։ Հետեւաբար ողջեր կը մկրտուին անոնց փոխարէն։

Մորմոնները իրենց այս արարքը արդարացը նշելու համար կը մէջբերեն Պօղոս առաքեալին վերագրուած հետեւեալ խօսքը. «Այլապէս ինչ պիտի ընեն անոնք, որոնք կը մկրտուին մեռելներուն համար։ Եթէ մեռելները յարութիւն պիտի չառնեն, ինչո՞ւ անոնք կը մկրտուին մեռելներուն փոխարէն»։ Աստուածաշունչի աւանդական մեկնաբանութեան մասնագէտները կը փիճփի, թէ յունարէնի մէջ «համար» բառը կրնայ բազմաթիւ նշանակութիւններ ունենալ, եւ թէ՛ այն հաւատարմութիւնը, որուն կ'ակնարկէ անիկա, մուծի մէջ կը մնայ։ Բացատրութիւն մը այն է, թէ այս տողը կը վերաբերի նոր ծնած մանուկները մահացած ոչ քրիստոնեայ նախահայերու անունով մկրտելու, յուսալով, որ մեռած նախնիները այս ձևով արժանի պիտի ըլլան Աստուծոյ գութինը։ Այլ բացատրութիւն մը կ'ըսէ, թէ մկրտութիւնը կը վերաբերի առաջին դարուն կիրարկուած սովորութեան մը, երբ առաջին քրիստոնեաները իրենց մահէն առաջ կը մկրտուէին, իրենց ընտանիքին մեռած եւ ոչ քրիստոնեայ նախնիներուն հետ միասին ըլլալու համար անդենականի մէջ։ Սակայն այսօր տարբերութիւնը այն է, որ մորմոնները նախապէս արդէն մկրտուած եւ իրենց հետ արեւակցական որեւէ կապ չունեցող մարդիկ կը մկրտեն։ Կայ

նաեւ այն բացատրութիւնը, թէ Պօղոս առաքեալ պարզապէս կ'ակնարկէ հերետիկոսներու աղանդի մը, որ հարցականի տակ կ'առնէ մեռելներուն յարութիւնը, հետեւաբար կը շեշտէ յարութեան հաւատալու կարեւորութիւնը։ Թէեւ յայտնի չէ, թէ Պօղոս առաքեալ ճիշդ որուն կ'ակնարկէ այս խօսքին մէջ, սակայն յստակ է, թէ ան չի խօսիր ուղղափառ քրիստոնեաներու մասին։

Միացեալ Նահանգներու մէջ 1830ին ժողովք Սմիթ անունով մշակ մը հիմը դրած է կրօնի մը, ենթադրաբար յարմարութեան պահում մը գրելով «Մորմոններու կայքէջ», պատմելով Քրիստոսէ դարեր առաջ Ամերիկա գացած հրեայ ցեղախումբերու մասին, որոնք ապրած են Հին Կտակարանին մէջ յիշուած փորձառութիւններուն նման պատմութիւն մը։ Մորմոնականութիւնը կը յայտարարէր «ճշմարիտ եկեղեցիին», այսինքն նախնական քրիստոնէական եկեղեցիին վերահաստատումը։ Անոր հետեւորդներէն ամէնէն աւելի ծանօթ են Վերջին Օրերու Սրբոց եկեղեցիները, որոնք կը հաւատան Քրիստոսի երկրորդ գալուստին։ Սակայն մորմոններուն գլխաւոր նպատակը Սիոնի վերակառուցումն է Արեւմտեան Ամերիկայի մէջ։ Սկիզբը անոնք հիմնած են աշխարհիկ հաստատութիւններ, մշակած են համայնական ստացուածքի եւ բազմակնութեան օրէնքներ, իսկ հետագային, երբ այս սովորութիւններէն հրաժարած են պետական ճնշումներու պատճառով, զարկ տուած են ուրիշները հաւատափոխ դարձնելու քարոզչութեան։ Կրօնական, սնտոսական եւ ընկերային բնագաւառներու մէջ թափանցելով՝ անոնք Արեւմուտքի մէջ ամէնէն աւելի արագ տարածուող աղանդներէն են այսօր։

Հրէական արեւելյանով այս աղանդը իր «փոխ մկրտութիւններով» խիստ կերպով մեթոճած է նոյնինքն ուղղափառ հրեաներու կողմէ, որոնք տեւաբար կը պայքարին իրենց ազգակիցները դուրս բերելու համար մորմոններուն ծագումնաբանական տեղեկութիւններու շտեմարանէն։ Արագապ թէ սովորական թեւէ հայրէ «փոխ մկրտութիւնը» կրօնական եւ ազգային իրաւունքի բռնաբարձում է... անոնք կարիք չունին շահախնդրի մահկանացուներու միջամտութեան անդեմականի մէջ «զրախոր բանալին» ձեռք ձգելու համար։

## ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ

**ՍՈՐՈՒՆՆԵՐԸ ՓՈՒՍ ՍԿՐՏՈՒԹԻՒՆ ԿԵ ԿԱՏԱՐԵՆ ՀԱՅ ՍՈՒՐԵՐՈՒ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՁՈՒՅՐՈՒ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ ՀԱՅ ԴԵՄԵՐՈՒ՝ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ ՍԵ ՍՏԵՂԵԼՈՎ։ ՀԱՅԱԿԱՆ «ԿՈՒՏԱԿ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԶԱՆՅՐ ՎԵՐՋԵՐՍ ԻՐ ԿԱՅԵՒՆ ՄԵՋ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ Է ԱՅՍ ԵՐԵՒՅՅՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳԱՐԽԱՎ ԿԱՆԻՑԵԱՆԻ(\*) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ՅՕՂՈՒՄԸ։ ՍՈՐԵՒ՝ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆԸ**

Վերջին Օրերու Սրբոց Յիսուս Քրիստոսի եկեղեցին գաղտնօրէն փոխ մկրտութեան կ'ենթարկէ հայ սուրբեր, Յեղափոխութեան զոհեր եւ այժմ մահացած անուանի հայեր՝ կատարելով կրօնական վիճելի արարողութիւն մը, որ հետեւեալ զննարկութեան կ'արժանանայ տարբեր դաւանանքներու կողմէ։

Չորս ամսուան ընթացքին կատարուած հետազոտական ուսումնասիրութիւններէ ի յայտ կու գայ, թէ վերջին տարիներու գաղտնօրէն փոխ մկրտուած են Գրիգոր Լուսաւորիչ, Վարդան Մամիկոնեան, Գրիգոր Տաթևացի, Մեսրոպ Մաշտոց եւ Ներսէս Շնորհալի, առանց հայ եկեղեցիին գիտակցութեան։

«Ասիկա սարսափելի է եւ դէմ է մեր կրօնին,- կ'ըսէ Վիգէն Եպս. Այգազեան, Ուսանողներու մէջ, լսելէ ետք փոխ մկրտութեան մասին»- Ոչ մէկ ձեւի յետ մահու փոխ մկրտութիւն կ'ընդունինք։ Ի՞նչպէս կը յանդգնին մկրտել սուրբ մը, որ կը պատկանի մեր եկեղեցիին եւ զայն կը դարձնեն իրենց եկեղեցիին մէկ անդամը»։

Վիգէն Եպս. Այգազեան հայ եկեղեցիին տիեզերական յարաբերութիւններու դրասենեակին գործադիր տնօրէնն է։ Ան կողմ ունենէր մորմոն-

ներուն՝ «վերջ դնելու» իրենց արարքին, աւելցընելով, թէ ցեղասպանութեան զոհերը փոխ մկրտելը համազօր է «երկրորդ ցեղասպանութեան»։

Մորմոնները նաեւ փոխ մկրտած են Կոմիտաս Վարդապետն ու Փուլիցըր մրցանակի դափնեկիր Ուիլիւմ Մարոյեանը, աշուղ Սայաթ Նովան եւ շարժապատկերի բեմագրիչ Ռուբէն Մամուլեանը, նոյնիսկ «Լուս Անճելու թաժմզ» թերթի լրագրող Մարքս Արաքսի սպանուած հայրը՝ Արա Արաքս։

«Ասիկա գայրոյթ կը պատճառէ,- կ'ըսէ լուսանկարներու ճամբով հայոց պատմութեան արձանագրութիւնը պահող եւ զայն տարածող Սէյիվ Փրոնճէթը»ի գործադիր տնօրէն Ռուսթ թոմասեանը։ Փոխ մկրտութիւնները կապ չունին պատմական արձանագրութիւններու հետ։ Անոնք կը փորձեն չըթել անձի մը ինքնութիւնը։ Ամէն ոք կը կարծէ, թէ ասիկա սարսափազն ծառայուածք է։

«Եթէ հայ համայնքը կ'ուզէ կապմակերպուիլ եւ իր ուժերը միացնել կրօնական այլ համայնքներուն, որոնք անարգութիւն կը պահեն ի տես այս երէւոյթի, անոնք կրնան համուշխմ մորմոնները, որ շրջէն իրենց ընթացքը եւ համալուծելն, թէ Աստուած չ'ուզէ, որ նման արքայազնութիւններ կատարեն։

### ԴԵՅՍ ՍԵՐԻՆ ՔԵՐԻՔ ԷՆԱՐԿՎ ԿԱՊՏԱԿԵՐԱԿՈՒԹԵՆԷՆՆ

զոււանբանական ցանկագրումի հարց է, մինչդեռ իրականութեան մէջ անոր նպատակն է ամէն ոք մորմոն դարձնել։ Արարքը ամբողջութեամբ անարգական է»։

Սակայն մորմոն եկեղեցին կը յամառի կառչի իր սովորութեան, որ սերտօրէն կապուած է անոր անդամներուն կիրարկած հաւատամքին։ «Վերջին Օրերու Սրբոց տաճարի մը մէջ կատարուած փոխ մկրտութիւն մը կրօնափոխութիւն չի պարտադրեր մահացած ռեւէ անձի,- կը բացատրէ մորմոն եկեղեցու բանբեր Տէյլ Պրիլ իրեն հետ կատարուած հարցազրոյցի մը առիթով։- Փոխ մկրտութիւնը հաւատքի հոգատարական արտայայտութիւն մըն է եւ առիթ կու տայ մեռելներուն ընդունիլ կամ մերժել այն, ինչ որ իրենց շնորհուած օրհնութիւնն էր կամ չանմանք։ Մեր հաւատքին մէջ համոզուած ենք, թէ անհասի մը ընտրութիւն կատարելու կարողութիւնը կը շարունակուի գերեզմանէն անդին։ Ոչինչ կը պարտադրենք ռեւէ անձի։ Եւ որովհետեւ չենք միտքի անարգել ռեւէ մէկը, կը յուսանք, որ ոչ ոք մեր արարքը պիտի ընդունի իբրեւ անարգանք»։

Սակայն հրեայ համայնքը չափազանց անարգութեամբ զգացած էր 1990ական տարիներուն, երբ

ի յայտ բերած էր, թէ մորմոնները փոխ մկրտած էին հրէական Ողակիզումի զոհերը, ներառեալ օրագրուածներու մը դեռատի հեղինակը՝ Էն Ֆրէնքը։ Մովսիսականութիւնը նոյնիսկ չի ճանչնար մկրտութիւնը։

«Մորմոններուն համաձայն, բոլոր այն հրեաները, որոնք ընդունած են փոխ մկրտութիւնը, իրենց կեանքը ապրած են իբրեւ ջերմեռանդ եւ հաւատացեալ հրեաներ եւ իրենց ողջութեան նախընտրած են մահը, քան թէ՛ հաւատափոխ դառնալ, սակայն իրենց մահէն ետք յանկարծ որոշած են հրաժարիլ իրենց հաւատքէն,- կ'ըսէ հրեայ մեկնաբան Տան Հիսըն։- Անոնք կը շեշտեն, թէ իրադարձութիւնը բնական էն դուրս բան մըն է եւ հիմնուած է մեռելներուն հետ հաղորդակցելու կարողութեան վրայ։ Ի՞նչ փաստ կայ նման հաղորդակցութեան մը։ Իսկ այն մեռելները, որոնց հետ հաղորդակցած են մորմոնները, ի՞նչ համեմատութեամբ ընդունած են մկրտութիւնը, ի՞նչ համեմատութեամբ՝ մերժած»։

Հրէական համայնքի բողոքներուն ընդառաջելով՝ մորմոն եկեղեցին 1995ին յօժարած է Ողակիզումի զոհերուն եւ 400 հազար այլ հրեաներու բոլոր անունները վերցնել իր Ծագումնաբանական Միջազգային Ցուցակէն (16 Երբ 6 Երբ 6) ձեռնարկով ինտերքս)։ Համացանցի վրայ տեղեկութիւններու շտեմարան մը, որ աշխարհի տարբեր կողմերէն շուրջ 400 միլիոն մեռելներու անուններ կը պարունակէ։

Սակայն եկեղեցին հրապարակաւ խայտառակուեցաւ, երբ Սոլթ Լէյք Սիթիի բնակիչ եւ անկախ ուսումնասիրող Հեյնէ Ռէտքրի յայտնաբերեց տեղեկութիւններու շտեմարանին մէջ մնացած հազարաւոր հրեաներու անունները։

«Ասիկա կրօնական վերաքննութիւն է եւ ապարդիւն ճիգ մը՝ պատմութիւնը շրջելու դէպքի մը,- կ'ըսէ Ռէտքրի- Ձի նշանակեք, թէ պէտք է թոյլատրել երեւոյթը, պարզապէս որովհետեւ մորմոնները կ'ըսեն, թէ փոխ մկրտութիւնը կը կատարեն՝ սպաննուած անձերու նկատմամբ իրենց տածած սէրն է եւ կարեկցանքէն մղուած։ Անոնք նոյն պատգամ կ'ուղղեն, ինչ որ թուրքերը ուղղած են Հայերուն եւ նացիները՝ հրեաներուն, թէ՛ այս ժողովուրդները ստորագրա են։ Մորմոնները ընդհանրապէս կը շեշտեն, թէ սխալ բան մը կայ բոլոր վերջին Օրերու Սրբոց կրօններէն ուղիւ, եւ թէ՛ մեռելները միայն մորմոնականութիւնը պէտք է ընդունին եւ խոստովանին, թէ սխալ կրօններու հաւատացած են իրենց ողջութեան։ Ասիկա յուսեցոյց ձեւի կրօնամոլութիւնն է»։

Ռիչըա Օսլինի, ոչ մորմոն մը, որ հեղինակներէն մէկն է 1999ին հրատարակուած «Մորմոն Ամերիքա» գիրքին, հարցազրոյցի մը մէջ կ'ըսէ. «Մորմոնները ունին այս հատու, կոկիկ եւ չափաւած ձեւուած պատասխանը. պարզապէս կը

մկրտենք մեռելները, եւ այս աշխարհէն հեռացած մարդիկ տո ի թ մը կ'ունենան ընկալելու վերանորոգ անեարանը»։

Օսլինի կրօնական նիւթերու լրագրող մըն է եւ 30 տարիէ ի վեր պարբերաբար գրած է մոր-

«Հայ համայնքը պէտք է յստակ ուղեգրի ունենայ արեւելյան մորմոն եկեղեցիին առջնորդներուն։ Նկատած ենք, թէ այս եկեղեցիին առջնորդները չեն խոսափիր այս հարցին վերաբերող լուրջ երկյուսութենէ։ Հայ առաջնորդները իրենք են անոնք, որոնք պէտք է յստակ դարձնեն մորմոն եկեղեցիին, թէ անիկա պատասխանատու է իր անունով առնուած քայլերու»։

**ՈՒՐՈՒՍ ԱՐԿԱԿԱՍ ՔՈՒՓՈՐ ՍԱՅԱՆՆ ԿԵԿՆՔՍԱԿ ԿԵՂՐՈՒՆԷՆ**

մոն եկեղեցիին մասին։ Ինչ կը վերաբերի ողջ անձերու փոխ մկրտութեան, ան կ'ըսէ. «Կաթողիկէ, մեթոնական, երիցական եւ հարամկրտչական եկեղեցիները մորմոններու մկրտութիւնը չեն ճանչնար իբրեւ քրիստոնէական մկրտութիւն, որովհետեւ կը հաւատան, թէ մորմոն եկեղեցին իրենց հասկացողութեամբ քրիստոնէական ուսմունքներ չ'աւանդէր»։ Այգազեան եպիսկոպոսին համաձայն, Հայ Առաքելական եկեղեցին չի յարիլ մորմոն եկեղեցիներուն։

Մորմոնները Աստուածաշունչէն տող մը կը մէջբերեն պաշտպանելու համար մեռելներու փոխ մկրտութիւնը։ Պօղոս առաքեալ կոտնթացիներուն ուղղուած իր առաջին նամակին մէջ կը կ'ըսէ. «Այլապէս ի՞նչ պիտի ընեն անոնք, որոնք կը մկրտուին մեռելներուն համար։ Եթէ մեռելները յարութիւն պիտի չառնեն, ինչո՞ւ անոնք կը մկրտուին մեռելներուն փոխարէն»։


«Մորմոնները կրօնական միակ համայնքն են, որոնք այս տողերը կը բացատրեն՝ ըսելով, թէ Պօղոս առաքեալ կ'ընդունի փոխ մկրտութիւնը,- կ'ըսէ կաթողիկոսութիւնը տարածելու նպատակով «Ափոլոնիքսի Եֆեսոս ի վաճառքի դրձը ֆոր բեթթիլի Եֆեսոս» ոչ հաստատար կազմակերպութեան տնօրէնը՝ Ջէյմս Աքին։- Եթէ Պօղոս առաքեալ իրապէս կը պաշտպանէր փոխ մկրտութեան գաղափարը, ապա անիկա յաճախակի երեւոյթ պիտի ըլլար կանուխ քրիստոնէական եկեղ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



## ԱՇԽԱՐՀ



### ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌՆԱՅԹԵՏ ՀԱՆԳԻՍԱՅԱԻ ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆ



Նիսթըրոյ՝ որ հեթորիք մը իրագործեց

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 37րդ հանգրուանի մրցումներուն, Մանչեսթըր Եունայթըդ 4-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Չարլթընը, հանդիսացաւ ախոյեան՝ 15րդ անգամ ըլլալով: Անիկա վերջին 11 տարիներուն ութերորդ անգամ ըլլալով կը շահէր տիտղոսը:

Ախոյեանին ճակատագիրը պիտի յստականար վերջին հանգրուանի մրցումներուն, այն պայմանով սակայն, որ 2րդ դիրքը գրաւող Արսենալ իր դաշտին վրայ պարտութեան մատնէր Լիժը: Սակայն պատահեցաւ հակառակը եւ մարպիչ Արսեն վենկերի կապ մը 3-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց:

Արսենալի կոլերը նշանակեցին Թիերի Հանրի (31րդ) եւ Տենիս Պերկամպի (63րդ), իսկ Լիժի կոլերը՝ Հերի Քիւրլ (5րդ), Իան Հարթ (48րդ) եւ Մարք Վիտուքա (88րդ): Աստրալիացի Վիտուքայի նշանակած կոլը (կասկածելի օֆսայտէ մը ետք) պատճառ դարձաւ, որ Արսենալ վերջին հինգ տարիներուն չորրորդ անգամ ըլլալով հանդիսանայ փոխ ախոյեան:

Իսկ Չարլթընի դէմ տեղի ունեցած մրցումին, հոլանտացի Ռուտ վան Նիսթըրոյ հեթորիք մը իրագործեց (32րդ, 37րդ եւ 53րդ), մինչ Տէյվիտ Պեքհամ նշանակեց առաջին կոլը (11րդ):

Ստորեւ՝ 37րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Արսենալ - Լիժ	2-3
Ասթոն Վիլա - Սանտըրբըր	1-0
Պլեյքըբը - Ուեսթ Պրոմուիչ	1-1
Ֆուլհեմ - Էվըրթըն	2-0
Լիվըրպոլ - Մանչեսթըր Սիթի	1-2
Մանչեսթըր Եունայթըդ - Չարլթըն	4-1
Միտլդը Կոպո - Թոթեմհեմ	5-1
Նիսթըր - Պրոմուիչ	1-0
Ստուրմքեմքըն - Պոլքըն	0-0
Ուեսթ Համ - Չելսի	1-0

<b>ԴԱՍԱՌՈՐՈՒՄ</b>	<b>ԿԵՏ</b>
1. Մանչեսթըր Եունայթըդ	80 (72-33)
2. Արսենալ	72 (75-41)
3. Նիսթըր	68 (61-46)
4. Չելսի	64 (66-37)
5. Լիվըրպոլ	64 (60-39)
6. Էվըրթըն	59 (47-47)
7. Պլեյքըբըն	57 (48-43)
8. Մանչեսթըր Սիթի	51 (47-53)
9. Թոթեմհեմ	50 (51-58)
10. Միտլդը Կոպո	49 (47-42)
11. Ստուրմքեմքըն	49 (41-40)
12. Չարլթըն	49 (45-55)
13. Պրոմուիչ	47 (39-47)
14. Ասթոն Վիլա	45 (41-44)
15. Ֆուլհեմ	45 (40-50)
16. Լիժ	44 (55-56)
17. Պոլքըն	41 (39-50)
18. Ուեսթ Համ	41 (40-57)
19. Ուեսթ Պրոմուիչ	25 (27-63)
20. Սանտըրբըն	19 (21-61)

### ՓՆԿ ՓՈՆԿ

#### Հ.Մ.Ը.Մ.՝ ԵՐՐՈՐԴ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի տղոց խմբային ախոյեանութեան մրցումներուն, Շարք օր, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ արձանագրեց յաղթանակ մը եւ կրեց պարտութիւն մը: Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մոն Լա Սալը, իսկ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Բիալի:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ, որ իր վերջին մրցումը կը կատարէ Մաանի Սայտայի դէմ, տղոց խմբային ախոյեանութիւնը կ'աւարտէ երրորդ դիրքին վրայ:

### ՖՈՐՄԱՆԻՆ 1. ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻ

#### ՇՈՒՄԻ՝ ԱՌԱՋԻՆ, ԱԼՈՆԶՈ՝ ՕՐՈՒԱՆ ԱՍՏՂԸ

Ֆորմուլա 1ի 5րդ կրան փրին, որ տեղի ունեցաւ Երէկ Պարսելոնայի մէջ (Սպանիա), վերջ գտաւ Ֆեռնանդո Ալոնսոյ շուքը: Մարկ Միքայել Շումպերը յաղթանակով:

Շումպերը, որ օր մը առաջ փոլ-փոլիչընի մրցումը աւարտած էր լաւագոյն արդիւնքով, իր ասպարէզին ընթացքին շահեցաւ իր 66րդ տիտղոսը, իսկ հինգերորդը՝ Քարալանիոյ այս շրջակայքին:

Քոլորովին նոր եւ բարեփոխուած ինքնաշարժով իր մասնակցութիւնը բերած Շումպի, այս յաղթանակէն ետք ընդհանուր դասարան մէջ գրաւեց 2րդ դիրքը եւ չորս կէտով ետ կը մնայ Մաքլարընի ֆինլանտացի վարորդ՝ Քիմի Ռայքոնընէն, որ եղաւ երկուսն ալ մեծագոյն անբախտը, երբ հապի մրցումը սկսած անոր ինքնաշարժը բախեցաւ պրակիցի Անթոնի Փիցոնիայի (Ժակուար) ինքնաշարժին: Ռայքոնըն, որ մրցումը սկսած էր 20րդ եւ վերջին դիրքէն, ճախորդ չորս կրան փրիններուն բոլորին ալ ներկայ գտնուած էր փոտիումին վրայ:

Մաքլարըն երէկ այլ հարուած մըն ալ ստացաւ, երբ անոր երկրորդ վարորդը՝ բրիտանացի Տէյվիտ Քուլթարտ ինքնաշարժի արկած մը ունեցաւ 17րդ լէփին եւ չաւարտեց մրցումը:

Շումպերի խմբակից պրակիցի Ռուպէն Պարիքելլօ, որ առջի օր փոլ-փոլիչընին հանդիսացած էր 2րդ, կրան փրին աւարտեց գրաւելով երրորդ դիրքը:

Ռընոյի սպանացի երիտասարդ վարորդ

<b>ՌԷՍԸ ԾԱՆՐ</b>
<b>ՊԱՐՏՈՒԹԻՒՆ</b>
<b>ԿՐԵՅ, ՍԱԿԱՅՆ</b>
<b>ՌՈՆԱԼՏՕ</b>
<b>ՆՇԱՆԱԿԵՅ</b>
<b>ԻՐ 300ՐԴ ԿՈՂԸ</b>

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 32րդ հանգրուանի մրցումներուն, Աէալ Մատրիտ իր դաշտին «Սանթիակո Պէռնպէ»-ի մէջ կրեց 5-1 արդիւնքով ծանր պարտութիւն մը՝ Մայորքայէն:

Վերջին անգամ Աէալ իր դաշտին վրայ Նոյեմբեր 2000ին պարտութիւն մը կրած էր դարձեալ Մայորքայէն:


Մայորքայի այդ հինգ կոլերէն մէկը նշանակեց... Ռուպէր Քարլոս սխալմամբ իր բերդէն ներս:

Աէալ Մատրիտի միակ կոլը նշանակած պրակիցի Ռոնալտօ յաջողեցաւ իր ասպարէզին 300րդ կոլը նշանակել:

Ֆեռնանտօ Ալոնսօ ունեցաւ փայլուն ելոյթ մը եւ գոհ ձգեց իր համակիրները, երբ իր երկրին մէջ տեղի ունեցած այս կրան փրին աւարտեց 2րդ դիրքին վրայ: Ալոնսօ խոստմնալից վարորդ մըն է, եւ շատ մը մասնագէտներու համաձայն՝ ան ապագայի աստղը կրնայ հանդիսանալ Շումպի նման:

Ստորեւ՝ Պարսելոնայի կրան փրին արդիւնքները.

- 1.- Միքայել Շումպեր (Գերմանիա) Ֆեռնարի 1 ժամ 33' 46"
- 2.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա) Ռընօ
- 3.- Ռուպէն Պարիքելլօ (Պրակի) Ֆեռնարի
- 4.- Խուան Փալլօ Մոնթոյա (Քոլումբիա) Ուիլիըմս
- 5.- Ռալֆ Շումպեր (Գերմանիա) Ուիլիըմս



Միքայել Շումպեր



Չախէն աջ՝ Ալոնսօ, Շումպեր եւ Պարիքելլօ

Ստորեւ՝ վարորդներուն դասարանը

1.- Քիմի Ռայքոնըն (Ֆինլանտա) Մաքլարըն	32
2.- Միքայել Շումպեր (Գերմանիա) Ֆեռնարի	28
3.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա) Ռընօ	25
4.- Ռուպէն Պարիքելլօ (Պրակի) Ֆեռնարի	20
5.- Տէյվիտ Քուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն	19
6.- Ռալֆ Շումպեր (Գերմանիա) Ուիլիըմս	17
7.- Խուան Փալլօ Մոնթոյա (Քոլումբիա) Ուիլիըմս	15
8.- Ճիանքարլօ Տիպիքելլօ (Իտալիա) Ճորտըն	10
9.- Եաննօ Թրուլի (Իտալիա) Ռընօ	9
10.- Հայնօ Հերլոտ Ֆրենցըն (Գերմանիա)	7

Ստորեւ՝ խումբերուն դասարանը.

1.- Մաքլարըն	51
2.- Ֆեռնարի	48
3.- Ռընօ	34
4.- Ուիլիըմս	32
5.- Ճորտըն	11
6.- Սաուպըր	8
7.- ՊԱՐ	6
8.- Թոյրօս	3
9.- Ժակուար	2

### ԹԵՆԻՍ

#### ՖԵՏԵՐԷՐԻ ՅԱԶՈՂ ԸՆԹԱՅՔԸ ՄԻՒՆԻԽԻ ՄԷՋ

Միւնիխի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքի աւարտականին, թիւ 1 դասուած Վոլիքեթի Ռոմի Ֆետերերի 6-1 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք ֆինլանտացի Եարքօ Նայմիընը (դասուած՝ 8րդ) տիրացաւ տիտղոսին:

● ՎԱԼԵՆՍԻԱՅԻ մէջ (Սպանիա) տեղի ունեցող տղոց միջազգային մրցաշարքի աւարտականի մրցումը վերջ գտաւ թիւ 1 դասուած սպանացի Խուան Քարլոս Ֆերերի յաղթանակով, որ 6-2 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց պելճիքացի Քրիսթօֆ Ռոչիւր: Նշենք, թէ Ռոչիւր քառորդ աւարտականին 6-2 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց իր հայրենի մարպիկ Սարգիս Սարգսեանը:

### ԱԹԼԵԹԻՉՄ

#### ԱՆՆԱ ԿԵՎԱՐԱՅԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇԸ



ԱԸԸԱ Կեվարա

Մեքսիքայի մէջ տեղի ունեցող աթլետիկայի կրան փրին, մեքսիքացի Աննա Կապրիէլա Կեվարայ աղջկանց 300 մետր վազքի մրցումներուն աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, արձանագրելով 35" 30 արդիւնք մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր անգլիացի Քէյթի Քուքի (35" 46), որ հաստատուած էր... Օգոստոս 1984ին:

### ՊԱՍԵԹՊՈՒ

#### Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Լիբանանի տղոց պասթեթպոլի տարիքային ախոյեանութեան իր կատարած մրցումին, երէկ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս (88-89-90ի խումբը) 129-46 արդիւնքով պարտութեան մատնեց Պիթըրին կազմը:

Օր մը առաջ տեղի ունեցած մրցումին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի 84-85ի տղաքը 54-42 արդիւնքով պարտութիւն մը կրեցին Ֆէյթրոնէն:

### ՖՈՒԹՊՈՒ

#### Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ ՄՆԱՅ Դ. ԴԱՍԱԿԱՐԳ

Լեռնալիբանանի նահանգէն ներս տեղի ունեցող ֆութպոլի Դ. դասակարգի ախոյեանութեան 8րդ հանգրուանին իր կատարած մրցումին (Ե. խմբակ), Շարք օր, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Հասուտ 4-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սաֆա Շուէյթաթէն եւ չկրցաւ ապահովել Բ. հանգրուանին իր տոմսը, այսպիսով մնալով Դ. դասակարգ:

### ՔԱԶՐՕ

#### ԵՌԻՎԷ ԶԿՐՅԱԻ ԿԱՆՈՒԽԷՆ ԱՊԱՀՈՎԵԼ ՏԻՏՂՈՍԸ

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 31րդ հանգրուանի մրցումներուն, պարագուլիսի դիրքը գրաւող Եուվենթուս չկրցաւ յաղթանակ վերադառնալ Լացիօ Ռոմայի դաշտէն, որ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց:

Նկատի ունենալով, որ անոր անմիջական մրցակիցը Ինթեր Միլան իր կարգին 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Աթալանթայի հետ, Եուվենթուս Քալչիոյի աւարտէն երէք հանգրուան առաջ պիտի հանդիսանար ախոյեան՝ 27րդ անգամ ըլլալով: Այժմ անիկա պիտի սպասէ յառաջիկայ Շարք օրուան, երբ իր դաշտին վրայ հիւրընկալէ Փերուճիան: Յարթանակ մը արձանագրելու պարագային Եուվէ պիտի հանդիսանայ ախոյեան, նկատի ունենալով որ անիկա այժմ ուր կէտի առաւելութիւն մը ունի Ինթերի վրայ:

Ա. Մ. Միլան 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք նախկին դիրքը գրաւող Քոմոն, այժմ կը մնայ 3րդ դիրքին վրայ, անիկա տար կէտով ետ կը մնայ Եուվենթուսէն:

Իր կրած այս պարտութենէն ետք, Քոմօ փոխադրուեցաւ Բ. դասակարգ: Անոր հետ Բ. դասակարգ փոխադրուեցաւ նաեւ վերջին դիրքը գրաւող Թորինօ, որ իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ուտինէլէն:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ա. Մ. Միլան - Քոմօ	2-0
Աթալանթա - Ինթեր Միլան	1-1
Քիւսիօ - Փրաչէնցա	3-1
Լացիօ Ռոմա - Եուվենթուս	0-0
Մոնթեա - Էմփոլի	1-1
Փարմա - Պրոնիա	1-2
Փերուճիա - Պրեչիա	0-0
Ռեճիան - Ա. Էս. Ռոմա	2-3
Թորինօ - Ուտինէլէ	0-1

<b>ԴԱՍԱԿԱՐԳ</b>	<b>ԿԵՏ</b>
1.- Եուվենթուս	68 (57-22)
2.- Ինթեր Միլան	60 (59-35)
3.- Ա. Մ. Միլան	58 (50-24)
4.- Լացիօ Ռոմա	54 (51-29)
5.- Քիւսիօ	51 (44-33)
6.- Փարմա	49 (49-33)
7.- Ուտինէլէ	47 (32-33)
8.- Ա. Էս. Ռոմա	45 (51-43)
9.- Պրոնիա	41 (38-40)
10.- Փերուճիա	40 (36-42)
11.- Պրեչիա	38 (32-33)
12.- Մոնթեա	37 (27-42)
13.- Էմփոլի	36 (35-43)
14.- Աթալանթա	31 (31-45)
15.- Ռեճիան	31 (32-50)
16.- Փրաչէնցա	26 (36-55)
17.- Քոմօ	21 (25-51)
18.- Թորինօ	20 (21-53)

